ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Ք.Գորիս, Գ.Տաթևացի 31
gorishospital@rambler.ru
tel. (0284) 2 - 21 – 52

REPUBLIC OF ARMENIA
SYUNIK MARZ

"GORISI BGSHKAKAN KENTRON,, CJSC

Goris, 31 Gr. Tatevatsi street

N· 348

20 դեկտեմբեր 2022թ.

<Բիլդինգ Կոնստրուկշն> ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Մկրտչյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լրիվ լուծելու մասին

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի և <Բիլդինգ Կոնստրուկշն> ՍՊԸ-ի միջև 09.09.2022թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/25/1> ծածկագրով <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի կարիքների համար անխափան սնուցման սարքի մատակարարման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սակայն Վաճառողը մինչ օրս ապրանքը չի մատակարարել և պայմանագիրը ավարտվում է ս/թ. դեկտեմբերի 25-ին:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի <բ> ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի մատակարարման ժամանակացույցը սահմանված է եղել առավելագույնը 80 օր:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ -ն ամբողջությամբ լուծում է <Բիլդինգ Կոնստրուկշն> ՍՊԸ-ի միջև 09.09.2022 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/25/1> ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները,ապա <Բիլդինգ Կոնստրուկշն> ՍՊԸ -ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ -ի անվամբ «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացված 2475700530300010 հաշվեհամարին և վճարված կտրոնի բնօրինակը ներկայացնել <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ:

ՏՆՕՐԵՆ Գ.ՄԱՇՈՒՐՅԱՆ